

**ՀԱՐՍԱՆԵԿԱՆ ՀԱԳՈՒՍՏԸ ՇԻՐԱԿ—ՋԱՎԱԽՔՈՒՄ**  
(19-րդ դ.—20-րդ դ. սկիզբ)

**Ս. Հ. ԳՈՂՈՍԾԱՆ**

Հայ ավանդության շարադի ազգագրական ուսումնասիրության շուսարանված հարցերից է ծիսական (հարսանեկան, ծննդյան, թաղման, օրացուցային տոների ժամանակ կիրառվող) հագուստի առանձին տարրերի ու համալիրների, դրանցում արտահայտված առանձնահատկությունների բացահայտումը, մինչդեռ տարազի տոնա-ծիսական տարրերակների ուսումնասիրությունը կարևոր է մի կողմից ժողովրդական սովորույթների և ծեսերի համակարգում հագուստի այս կամ այն տարրի ունեցած նշանակության, առանձին հանդերձների ծագման հարցերի լուսաբանման և մյուս կողմից՝ որևէ ծեսի, երբեմնի, վաղուց մոռացված իմաստը պարզաբանելու տեսանկյունից:

Սոցիալ-ունեցվածքային, սեռային ցուցիչ լինելուց զատ, հագուստը նաև, զգայական, հոգեբանական ցուցիչ է:

Տոնա-ծիսական հագուստն արտացոլում է մարդկային կենաց այս կամ այն փուլերը (հարսանիք, ծնունդ, մահ)՝ կրելով տվյալ էթնիկ հանրույթի ինքնատիպ աշխարհընկալման, հիմնավորոց հավատալիքների ու պատկերացումների, գեամատման ու արժեքային կողմնորոշման ազդեցությունը:

Հարսանեկան հանդերձանքն արտահայտում է կյանքի ամենացնծուն հանդեսի խորհուրդներն ու խնդիրները: Այդ հանդերձանքը կրողը համեմատվում է ծաղկող ծառի հետ, իսկ հագուստը հանդես է գալիս որպես զարդարանք՝ գույնի, գեղագարդման, ծիսակարգի նշանային միտվածության, սրբազան նշանակություն ստացած տարրերի (զոզնոց, գոտի, քող, ուսկապ և այլն) պարտադիր առկայությամբ:

Հին հայկական հարսանեկան ծիսակարգի հանդերձանքի վերաբերյալ կան որոշ արժեքավոր, թեև հիմնականում մակերեսային, ակնարկային բնույթի մատենագրական և մանրանկարչության նյութեր: Ջավախքի ավանդության շարադի հարսանեկան համալիրի վերաբերյալ որոշ նյութեր կան Ե. Լալայանի «Ջավախք» աշխատության «Ամուսնության և հարսանյաց սովորություններ» վերտառությամբ բաժնում<sup>3</sup>, իսկ Ծիրակի համալիրի վերաբերյալ՝ Ա. Մխիթարյանի<sup>4</sup>, Քաջբերունու<sup>5</sup>, Կ. Սեդրոսյանի<sup>6</sup> աշխատություններում:

Մանրամասնությունների վրա կանգ չառնելով (որոնք տյալ դեպքում անհրաժեշտ չեն) նշենք, որ հարսանեկան ծիսակարգը Ծիրակում կազմում էին բազմաթիվ ծեսեր. աղջկատես, խնամախոս-նշանդրեք, քյասարիչա, պսակի պատրաստություն, հարսնատես, փեսատես,

<sup>1</sup> Վ. Բոդյան, Հարսանեկան ծեսերի ու սովորույթների նկարագիր գրանցված 14-րդ դարում, «Բանբեր Մատենադարանի», 1956, 3, էջ 53—56, Վ. Հացուրի, Պատմություն հին հայ տարազին, Վենետիկ, 1923, էջ 288—299:

<sup>2</sup> Հին հայկական մանրանկարչություն, Եր., 1952, Ա. Գևորգյան, Արճեստներն ու կենցաղը հայկական մանրանկարներում, Եր., 1973:

<sup>3</sup> Ե. Լալայան, Ջավախք (Նյութեր ապագա ուսումնասիրության համար).— Երկեր, Բ. 1, Եր., 1983, էջ 188—186:

<sup>4</sup> Ա. Մխիթարյան, Փշրանք Ծիրակի ամբարներից, «Էմինյան ազգագրական ժողովածու» (ԷԱԺ), Մոսկվա—Ալեքսպոլ, 1901, էջ 240—246:

<sup>5</sup> Քաջբերունի, Հայկական սովորություններ, ԱՀ, Թիֆլիս, 1901, Գիրք 7—8, էջ 168—169:

<sup>6</sup> Կ. Սեդրոսյան, Արճեստավորական ավանդությունները և դրանց արտահայտությունները լեռնհանկանցիների կենցաղում, «Հայ ազգագրություն և բանահյուսություն» («ՀԱԲ»), 5. Եր., 1977, էջ 159—251:

պակադրություն, չարաավ դուրս տալ, գլուխը վանք և այլն<sup>7</sup>, իսկ Ջավախքում՝ աղջիկ ուզեք (պատագամ), Աշահդեր, մեծ հարսնացու, փեսատես, քասապիչա, պակաի պատրաստություն, թագվոր կանգնեցնել, պակադրություն և այլն<sup>8</sup>:

Ուշագրավ է, որ դիտարկվող մարզի, ինչպես և ընդհանրապես հայկական հարսանեկան ծիսակարգում, ընդունված էր երկու կողմերի միմյանց նվերներ տալու սովորույթը<sup>9</sup>: Մասնավորեցնելով ասեմք, որ ընդհանուր նվերներ հասկացության մեջ առանձնակի դեր ունենին հագուստի քաղկացուցիչ մասերը: Նվերներ տալու սովորություն հայոց մեջ կար դեռ հնուց: 14-րդ դարի մի ձեռագրի (Մատենադարան, 3937) համաձայն «Սովորութիւն է յամենայն տանի և տարեկանաց գնալ ի տուն հարսինն ընծայիք և կերակրովք»<sup>10</sup>: Որպես նշան տանում էին մատանի կամ ապարանջան կամ գինդ:

Ջավախքում աղջկա նշանդրեքին նվիրում էին գլխի հարդարանքի տարրեր, կտորներ՝ զգեստի համար, մի գույգ ոտնաման և այլն<sup>11</sup>: Հարկ է նշել, որ տղայի կողմից արված նվերների մեջ հատուկ տեղ ունենում էր ոտնամանը:

Սեպտեմբերին, հունիսի ժամանակ, վերոհիշյալ շրջանում փեսայի տնից հարսի համար քարմ մրգեր և մի գույգ ճգնա-կողիկ էին ուղարկում, որ դա, Ջելենիհի խոսքերով ասած, «հասարակ նվեր չէր»<sup>12</sup>, այլ ուներ որոշակի խորհուրդ, երևում է Ջավախքում տարածված այն սովորությունից, ըստ որի հարսի ոտնամանի մեջ 7 գարի էին դնում, որպեսզի 7 տարի տղա բերի<sup>13</sup>: Փաստորեն այն կապված է սեռական խորհրդանշի հետ և այս առումով ուշագրավ է Ջ. Ֆրոյդի այն դրույթը, որ «ոտնամանը, սուֆլին կնոջ սեռական օրգանների խորհուրդն ունեն»<sup>14</sup>:

Նվերներ քածին էին հանվում նաև փեսային՝ վերնագգեստի տարրեր, գլխարկ, գոտի, ազանեկիքի մասեր<sup>15</sup>:

Հագուստը, ըստ էության, այլ խնդիրներից զատ, ունի նաև նշանային ցուցիչի դեր, որի շնորհիվ, աներկբայորեն արտահայտվում է կրողի սոցիալական կարգավիճակը. այսպես՝ նույնիսկ միամյա աղջնակի գլխարկի վրայի մի հատիկ ոսկեդրամը վկայում է այն փաստը, որ կրողն արդեն նշանված է: Նույն խորհուրդն է ունեցել նաև «Ծառգարդար» սոցին եկեղեցում աղջկա գլխին քող գցելը<sup>16</sup>: Այս քողոր ակտերն էլ խնդիր ունեն ժողովրդի լեզվով ասած «իրենցով անել» այս կամ այն աղջկան՝ վերոհիշյալ նշանների միջոցով հայտնի դարձնելով ողջ համայնքին:

Ինչ վերաբերում է նվերներ փոխանակելու սովորությունին, պետք է նկատել, որ այն հին ակունքներ ունի և բացի կիրառական, հարգարժանային, ցուցադրական նշանակությունից, ունեցել է միավորող, մերձեցնող և սիրաշահող միտումներ:

Ըստ դաշտային ազգագրական նյութերի՝ անցյալ հարյուրամյակի վերջերին և ներկա դարի սկզբներին Օիրակում և Ջավախքում հարսանեկան հանդերձանքն ուներ մի քանի օրինաչափություններ:

Վաղ շրջանի հարսանեկան հանդերձանքի վերաբերյալ Վ. Հացունին գրել է. «Հավանական կը կարծեմ, որ սովորականն կը տարբերեր ճիտությամբ և ոչ ձևով»<sup>17</sup>: Այս ենթադրությունը հետագա դարերի համար ևս նշմարիտ է և հավաստվում է դաշտային ազգագրական նյութերով: Հարսի և փեսայի հագուստը ձևվածքով չի տարբերվել առօրեական տարբերակներից, սակայն, որպես կանոն, գեղագրողվել է հարուստ, նրբաճաշակ ասեղնագործություններով (որոնք, բացի գեղագիտական նշանակությունից, ունեցել են նաև պաշտպանական, մոգական խնդիրներ), առանձնացել գունագեղ և ոչ պատահական գունային համակարգի ընտրությամբ, քարձրորակ կտորների ընտրանիով (անշուշտ, սոցիալ-ունեցվածքային տարբերություններն այստեղ վառ դրսևորվել են):

Կապույտ, կանաչ, դեղին, կարմիր, մանուշակագույն և այլ վառ գույների մե-

<sup>7</sup> Նույն տեղում, էջ 243:

<sup>8</sup> Ե. Լալայան, Ջավախք, էջ 138—162:

<sup>9</sup> З. Харатьян. Культурные моменты семейных обычаев и обрядов у армян.— ԼԱԲ, Ереван, 1989, № 17, с. 5.

<sup>10</sup> Վ. Բոդյան, նշվ. աշխ., էջ 58:

<sup>11</sup> Ե. Լալայան, Ջավախք, էջ 143:

<sup>12</sup> Д. К. Зеленин. Русские народные обряды со старой обувью.— Живая старина, 1913, вып. 1—2.

<sup>13</sup> Ե. Լալայան, նշվ. աշխ., էջ 149:

<sup>14</sup> З. Фрейд. Очерки по психологии сексуальности. Минск, 1990, с. 64.

<sup>15</sup> Ա. Մխիթարյան, Փշրանք Օիրակի ամրարներից, էջ 285:

<sup>16</sup> Նույն տեղում, էջ 285:

<sup>17</sup> Վ. Հացունի, Պատմութիւն հին հայ տարազին, էջ 296:

տաքայա, թավշյա կտորներից կարված զգեստի վրա, հարսնացուի գոտկամասում կապել են, անպատճառ, կարմիր գույնի թավշյա, մահուդյա գոզոն<sup>18</sup>՝ արգասավորություն, քեղմնավորություն ապահովող զարդապատկերներով, գոզոնց ամրացվել է կամ արծաթյա կամ հյուսածո, ընծայական բարեմադթանք ունեցող մետաքսյա գոտիով: Ծոխ ու նրբաճաշակ է ասեղնագործվել նաև հարսնացուի ներքնագգեստը՝ բուսական և թռչնակերպ նախշերով: Լէյն կարել են հարսնացուն, մայրը կամ էլ ընտանիքի բարեկամ որևէ շնորհաշատ կին:

Կարծում ենք, որ հարսնակեան հագուստի նոր, գեղեցիկ, ընտիր լինելու ձգտումը պատահական և նոր երևույթ չէ, այլ իր արմատներով ձգվում է դեպի հազարամյակների խորքը՝ կապված լինելով մարդկանց աշխարհընկալման յուրահատկությունների, մարդկային հիմնավորց հավատալիքների ու պատկերացումների հետ. ամեն ջանք գործադրվել է խթանելու գույզի քեղմնավորմանն ու արգասաբերության ուժին: Միջնադարում ևս կար հարսին գեղեցիկ հագցնելու սովորույթ՝ «կույսը զարդարեն պայծառ և հրաշալի պատմուճանօք և մաքրափայլ ազանելօք կամ «հարսին պես լինիս մարմնով ծաղկազարդած»<sup>18</sup>: Հարսին սպիտակ հագցնելու միայն մի վկայություն կա՝ «գհանդերն հարսն յայն սպիտակացուցին»<sup>19</sup>, իսկ ընդհանրապես հարսին հագցրել են կանաչ, կարմիր, կապույտ գույների հագուստ, դա հավաստվում է քանահյուսական և ազգագրական նյութերով:

Հարսնակեան հանդերձանքում դրսևորված մի օրինակաչփություն ևս. հարսը, մտնելով ամուսնական տարիքային խմբի մեջ, ի տարբերություն աղջիկների, կրում է գլխի քարդ հարդարանք, որը գրեթե առանց լուրջ տարբերությունների պատկանում է ամբողջ կյանքում տարիքային հետագա խմբեր անցնելիս (երիտասարդ մայր, մի քանի երեխա ունեցող մայր, տարեց, ծեր կին), գլխի հարդարանքում տեղի էին ունենում որոշ փոփոխություններ:

Հարսնակեան հանդերձանքի կարևորագույն տարրը քողն է, որը ծածկել է հարսի դեմքն ամբողջովին: Ենթադրվել է, որ դա պարկեշտության համար է դրվել և «Կապույտի միշտ, զորշափ «կին նորահարսն է»<sup>20</sup>: Մեկ երեխա ունեցած երիտասարդ կնոջ երեսը ծածկող շղարշը բարձրացվում է, մեկից ավելի երեխաներ ունեցող կինը դադարում է կրել նորահարսնության խորհրդանիշը՝ քողը, որը փոխարինվում է գլխաշորով, տարեց, ծեր կանանց գլխի հարդարանքից հանվել են ճախշագարդ, ասեղնագործ, վատ նրբերանգների գլխաշորերն ու ճակատակալները, փոխարինելով դրանք անպաճուճ, համեստ տարբերակներով: Փոփոխություններ, որոնք էլ արտացոլել են ընտանեկան, սոցիալական լուրջ տեղաշարժեր կնոջ կյանքում:

Նորահարսի գլխի հարդարանքը առանձնանում էր նրանով, որ ի տարբերություն աղջիկների, զգացվում է մազերը ծածկելու սովորույթ, որը հավանաբար կապված է մազերին վերագրվող մոգական ուժի գաղափարի հետ: Եթե երիտասարդ աղջիկը գլխին միայն քող էր գցում, ցուցադրելով իր գեղեցիկ ու հաստ վարսերը, այստեղ գլխավոր դեր է կատարում էրոտիկ ֆունկցիան՝ տղամարդկանց դուր գալու միտումով, իսկ արդեն ամուսնացած կինը պարտավոր է ծածկել իր մազերը, քանի որ նա արդեն մի որոշակի տղամարդու և պատկանում: Ըստ Գագեն-Տորնի՝ «կինը պետք է ծածկեր իր մազերը, որպեսզի մտնելով ուրիշ տոհմ, չվնասի իր մոգական ուժով»<sup>21</sup>: Ըստ որում, ամուսնու տոհմը օգտագործում էր կնոջ քեղմնավորության ուժը որպես սեփականություն: Այսպիսով, կնոջ գլխի հարդարանքը նրա սոցիալական կարգավիճակի խորհրդանիշն է, նշանային ցուցիչը, որն արտահայտում է նրա կյանքում կատարված և կատարվելիք սոցիալական, ընտանեկան, տարիքային փոփոխությունները:

Գլխի հարդարանքից բացի հարսն ուներ հարուստ «զարդարանս պեսպես ի զգեստաց ի յոսկոյ և ի մարգարաւոյ և ի քարանց պատուականաց»: Նա կրել է «յոսկեհուոն զարդակերպեալ քառամանեակ պարանոցին, գնդեր ականջաց, ապարանջանք ձեռքերին»<sup>22</sup>: Այս սովորույթը շարունակվում է հետագայում, Օիրակում և Զավախքում նշանդրեքին հարսնացուին նվիրում էին մատանի, ոսկյա և արծաթյա դրամներ՝ կրծքազարդի և ճակատնոցի համար: Օիրակում հարսնատեսին նվիրում էին բուկեքերն էլ վար իջնող ժամանակահյուս, մարգարտագարդ քունքակախիկներ՝ ոսկե դրամներով եզերված, ոսկով և մարգարիտներով հարդարված ճակատագարդ, միաշարք և երկշարք ոսկեդրամներով ճակատնոց, ոսկյա կամ արծաթյա ապարանջաններ՝ Զավախքում՝ «խախալ», Օիրակում՝ «քիլազուկ» անուններով,

<sup>18</sup> Վ. Հացունի, Պատմություն..., էջ 297—299:

<sup>19</sup> Վ. Հացունի, Հայուհին պատմության անջև, Վեներտիկ, 1986, էջ 72:

<sup>20</sup> Վ. Հացունի, Պատմություն հին հայ տարազին, էջ 207:

<sup>21</sup> Н. Н. Гаген-Торн. Магическое значение волос и головных уборов.—СЭ, 1933, № 5—6, с. 78—79.

<sup>22</sup> Վ. Հացունի, Հայուհին պատմության անջև, էջ 112:

վերջինն հարդարված էր սևադափառ ծաղկանախշերով և հայտնի էր «գյուրվա քիւզուկ» անվամբ: Ըստ որում, առկա էր զարդերը փոխ վերցնելու սովորույթը՝ հարսանեկան ծիսակարգի ավարտից հետո վերադարձնելու պայմանով: Բոլորը չէ, որ տնտեսապես ի վիճակի էին իրենց հարսնացուին ցվիրել թանկարժեք մետաղից ու թանկագին ակներով զարդարված գլխի հարդարանքի տարրեր, զարդեր, ուստի չուներ խավերում հարկադրված են եղել գործածել դրանց հասարակ ու կեղծ փոխարինողները՝ մարգարիտ, ուլունքներ, սուկեզույն մետաղից փուլեր և այլն: Հարուստները, հատկապես քաղաքներում՝ Ալեքսպոլ, Ախալցքիս, Ախալքալաք, իրենց հարսներին ցվիրում էին նաև կրծքին ամրացվող սակեդրամների շարաններ, ոսկյա երկտակ հաստ շղթաներ՝ խաչով, վզնոցներ, թանկագին ակներով զարդարված ականջօղեր: Հարկ է նշել, որ այս շրջաններում զարդերին մեծ հարգ ու արժեք են տրվել, դրանք ունեցել են բարձր դեր՝ դիտվելով որպես «պատվի խնդիր» և պահվել սև օրերի համար:

Հարսանեկան զգեստը ամբողջացվել է ճերմակաթույր, ժանեկանման նախշերով, երկարաճիտ բրդյա գուլպաներով (հատկապես Ալեքսպոլում) և ոսկեքուղ բանվածքով, դեղին և կարմիր գույների գեղեցիկ համադրությամբ ոտնաման՝ մաս-բարուջով:

Հարսանեկան զգեստը կարելի են տղայի բարեկամները՝ տանն աշխատող կին դերձակների մոտ, կամ էլ այն պատրաստել է տղայի բարեկամ որևէ շնորհաշատ կին: Դերձակուհին գալով աղջկա տուն, որտեղ քերել են նաև տղայի զնած կտորը, չափերը վերցրել, ձեռքն անել մկրտուր և մի քանի անգամ իբրև թե փորձել ձևել կտորը և կտրել՝ քավորից նախապես որոշ դրամ ստանալուց հետո<sup>23</sup>: Այն հանգամանքը, որ հարսնացուի զգեստը պատրաստել են տվել տղայի հարազատները, հատկանշական է:

Այս առումով կարևոր է է. Կարապետյանի այն տեսակետը, որի համաձայն «հարսանեկան զգեստը բացի ուղղակի իմաստից ունի նաև մոգական նշանակություն, որը կապված է այն հնամենի պատկերացման հետ, ըստ որի հագուստը պատրաստելով փեսայի տանը, այն հարսնացուին հագցնելով կարելի է նրան անվախ քերել մի օտար տոհմ, չհարուցելով այդ տոհմի հովանավորող ոգիների դիմադրությամբ»<sup>24</sup>:

Փեսացուն ևս հագել է նոր, գեղեցիկ կարված, հատուկ դերձակների մոտ պատվիրված ավանդական զգեստներ՝ սև, շագանակագույն, կապույտ, մետաքսյա լաստիկ կտորից արևալուղ, բրդյա անդրավարտիք և մահուդյա տաք վերնագգեստ՝ չուխ: Ազանեղիքը երկարաճիտ կաշվե ոտնամանն էր՝ բրդյա նախշազարդ գուլպաներով ու տնայական-թղթուլաներով: Փեսացուի հագուստից անպակաս են եղել արծաթյա, որպես կանոն թամբանև ճարմանդով գոտիները և մորթե գլխարկը՝ որպես տղամարդկային արժանապատվության խորհրդանշիչներ<sup>25</sup>: Ուշագրավ է, որ հայոց մեջ ամուսնանալու իրավունք ձեռք բերած տղային անվանել են գոտիացու: Անցալույմ ևս հատուկ ուշադրություն են դարձրել փեսայի հագուստին «պաճուճել պճնի ի զարդս և ի զգեստս փեսային»<sup>26</sup>: Ըստ որում, փեսային 13-րդ դ. զգեցնում էին վերնագգեստ, վարտիք և գոտի. գլխին դնում գրպակ և պսակ, օղեր<sup>27</sup>:

Փեսայի հագուստը առանձնակի ծիսական իմաստ էր ստանում ոսկապ-կոսպանտի գործածությամբ, որը տարածված էր Զավախքում, Շիրակի գյուղերում: Ներկա դարի սկզբներից Ալեքսանդրապոլում այն դուրս էր եկել գործածությունից: Ուշագրավ է, որ այստեղ ճնողները երբ որոշել են ամուսնացնել իրենց որդուն, ասել են. «կանաչն ու կարմիրը կապենք»: Սրանից կարելի է ենթադրել, որ նկատի է առնվել կանաչ-կարմիր գույների ոսկապը՝ կոսպանդը, որպես չարխափան, երջանկաբեր միջոց, որը ներկա դարի սկզբին դուրս էր եկել կենցաղավարումից ու մոռացվել: 14-րդ դարի ձեռագրի տեղեկության համաձայն, «սովորություն է սպիտակ հանդերձ փեսային ազեցուցանել և խաչ գոտի կապել կարմիր՝ յետոյ և առաջի»: Առաջին հանգամանքը պարտադիր պայման չէր արդեն դիտարկվող ժամանակաշրջանում, իսկ խաչգոտին պետք է ենթադրել, որ հենց նույն ոսկապն էր: Վ. Հացունին ևս բերում է մատենագրական նյութեր, ըստ որոնց «խաչի կոճ կապեն փեսայի վրա ընդ ուսովն»: Այնուհետև տրված է քրիստոնեական մեկնություն. «Խաչանև զարդմ էր, որպեսզի առնե զխաչն և հետևի Քրիստոսին»<sup>28</sup>: Սակայն, դա ավելի վաղ շրջանի երևույթ էր, նախաքրիստոնեական հավատալիքներից եկող, և, ինչպես ասացինք,

<sup>23</sup> Ս. Պողոսյան, Դաշտային ազգագրական նյութեր (ԴԱՆ), Շիրակ, Զավախք, 1982—1987:

<sup>24</sup> է. Կարապետյան, Օձիտը հայոց մեջ, Եր., 1978, էջ 78—79:

<sup>25</sup> Մ. Варданян. Пережитки инстинкта у армян.—1967, № 4, с. 295.

<sup>26</sup> Վ. Հացունի, Պատմություն հին հայ տարածքին, էջ 296:

<sup>27</sup> Վ. Քոչյան, Աշվ. աշխ., էջ 55:

<sup>28</sup> Վ. Հացունի, Աշվ. աշխ., էջ 299:

կանաչ-կարմիր, կարմիր գույների ոչ պատահական, լիովին իմաստավորված համադրու-  
թյամբ ուկապը խորհրդանշել է քեղմնավոր ու երջանիկ կյանքի ակնկալություն:

Հարսնացուի կողմը ևս, ունենալով իր սպանելիքներն ու ակնկալությունները, տղային  
նվիրել է «թագավորի չամաչորը, շապիկն ու վարտիքը», ինչպես նաև բողջա գուլպաներ  
(հիմնականում հարսի, նրա մոր գործած թաշկինակներ, սոնապաններ, սրբիչներ, որոնք  
դրվել են հատուկ մետաքսյա կտորից տուտկապ բոխչայի մեջ: Այնքասահորապարտում ընդուն-  
ված էր փեսային նվիրել արծաթյա բաժակներ, ծխախոտատուփ և այլն: Համայնքը ցան-  
կանաչով գույզի քեղմնավոր ու արգասավոր համատեղ կյանքը, գիտակցաբար թե ենթա-  
գիտակցաբար, նրանց հետո է պահել չար ուժերի ազդեցության ներքո գտնվող, դժբախտ  
(իր հայեցակետով՝ ամուլ, ամուրի, որբևայրի) մարդկանց հետ անմիջական շփումից: Այս-  
ույես, նվերներ պատրաստելուն չէր թույլատրվում մասնակցել այդպիսի անհատների: Նվեր-  
ների պատրաստման անմիջական ու գործուն մասնակցություն ցուցաբերում էին հարսնա-  
ցուն, մայրը և նրանց մոտ քարեկամուրիները: Հավանական է թվում այն տեսակետը, ըստ  
որի հարսնացուն, նրա մայրն ու հարազատները պատրաստելով և հատուկ հոգածությամբ  
գեղազարդելով հագուստի առանձին տարրեր և դրանք կրողին՝ նորապսակին հանձնելով,  
նպատակ են ունեցել հմայական զորությամբ իրենց ցանկություններն ու հույսերը փոխան-  
ցել սպառա մերձավորին, ամուսնուն և փեսային<sup>29</sup>:

Այն մտայնությունը, որ համայնքը հատուկ հոգածությամբ ու խնամքով է վերաբերվել  
ապագա գույզի հանդերձների՝ որպես հատուկ նշանախին համակարգի, երևում է հետևյալ  
նկարագրից, պսակի հանդեսը կատարելուց առաջ տղայի հարազատները հավաքվում են  
տղայի հոր տանը և ուրախանում, մեծ հանդիսավորությամբ զգեստավորելով թագավորին:  
Մինչև զգեստավորումը քահանան գալիս և օրհնում է փեսայի հանդերձներն ու քավորի  
թուրը, որից հետո ամուրիի հանելով դրանք՝ «ծախում» մի քանի արատով ազգայներից  
միկին (կարծում ենք չար ուժերին մոլորեցնելու միտումով), ըստ որում, հանդերձանք զը-  
նողը այնուհետև կոչվել է «ազապաշի»: Այստեղ բոլոր մասնակիցներն էլ որոշակի ծի-  
սական խնդիրներ ունեն (քահանա, քավոր, ազապաշի) և իրենց մասնակցությամբ ծիսա-  
կան իմաստ են հաղորդել հանդերձներին<sup>30</sup>:

Հանդերձները մեկ առ մեկ ցուցադրելուց հետո միայն դրանք հագցրել  
են թագավորին: Ըստ որում, միջնադարում սովորույթ է եղել «գհարսիկն զամենային ինչ  
մերկացուցանեն ի նման է և ապա զնորն ազեցուցանեն, իսկ փեսային ոչ հանեն, այլ ի վե-  
րայ հնդյն զնորն ազեցուցանեն...»<sup>31</sup>: Կարծում ենք, որ սա խնդիր ունի չհարուցել հարս  
բերող տոհմի ոգիների զայրույթը:

Փեսայի զգեստավորմանն ուղեկցող գովերգումը կատարվել է այս կերպ.

**Անեք շնորհավոր**

**Քրեզրոնից կարած վարտիքը,**

**Մարդուփի փաթուխայից շապիկը**

**Անեք շնորհավոր մեր թագավորին<sup>32</sup>:**

Ազապաշին կամ ազգայներից մեկը հերթով ցուցադրել են փեսայի հանդերձները և  
դիմել խմբին. «Թագավորի ազգայներ, գիդեք մեր թագավորն ինչ ունի», խումբը երգով  
սատախանան է.

**Ասենք շնորհավոր, ասենք շնորհավոր**

**Մեր թագավորին, հազար շնորհավոր:**

Վերջում գովերգել են «գլխարկն և մետաքսե կոսպանդը», դրանք 3 անգամ պտտեցրել  
թագավորի գլխի շուրջը, գլխարկը դրել գլխին, իսկ ուկապը կապել ուսին<sup>33</sup>: Թագավորին  
զգեստավորելուց հետո նրան զուգված-զարդարված կանգնեցրել են մեջտեղում և խմբով  
երգել:

Այս առումով շատ դիպուկ է թվում Վ. Բարդավելիձեի այն տեսակետը, ըստ որի հնում  
մարդիկ նվիրագործման ծեսի, շրջանաձև շարժման միջոցով, ինչպես և կարմիր և սպիտակ  
գույների հանդերձավորմամբ, հաղորդակցվում էին ստավածությունների հետ, պարտրվում  
նրանց՝ հատկանիշներով և ստանում վերջիններիս հովանավորությունը<sup>34</sup>:

<sup>29</sup> Է. Կարապետյան, Օժիտը հայոց մեջ, էջ 79:

<sup>30</sup> Ա. Մխիթարյան, Ազվ. աշխ., էջ 245:

<sup>31</sup> Վ. Բարդավելիձե, Ազվ. աշխ., էջ 55:

<sup>32</sup> Հաջրբերունի, Հայկական սովորություններ, էջ 162—163:

<sup>33</sup> Ա. Մխիթարյան, Ազվ. աշխ., էջ 246:

<sup>34</sup> В. В. Бардавелидзе. Древнейшие религиозные верования и обрядово-графическое искусство грузинских племен, Тбилиси, 1957, с. 258.

Նույն ձևով զգեստների, հագուստի որոշ տարրերի ոչ պատահական ընտրությամբ, գործածելուց առաջ կողմի գլխի շուրջը որոշակի թվով, այն է՝ 3 անգամ պտտելուց հետո հանդերձավորելը ունեցել է մոզական խորհուրդ<sup>35</sup>: Հիմքում մեկ գլխավոր նպատակ է՝ փեսային (հարսին) զերծ պահել վնասաբեր ուժերի ազդեցությունից, ապահովել նրա կենսականությունը սերունդը շարունակելու գործում:

Փեսային հատուկ շուքով և ծիսակարգով զգեստավորելուց հետո տղայի թարեկամները շուքում-դիտվով ուղևորվել են հարսի տուն: Երգ ու պարից հետո երիտասարդ աղջիկները քավորկնոջ գլխավորությամբ տան մի անկյունում հագցրել են հարսի զգեստները՝ դրանք գլխի շուրջը երեք անգամ պտտելուց և գովերգելուց հետո միայն: Զգեստավորելուց հետո, անմիջապես, հարսի գլխին զգել են երկու՝ կարմիր և սպիտակ գույների մետաքսյա նուրբ քողեր՝ մեկը ուսերն ի վար, մյուսը՝ մինչև կրծքամաս՝ ծածկելով երեսը: Ուշագրավ է, որ հարսի գոտին՝ ողջախոհության խորհրդանիշը, կապելու համար կանչել են քավորին և որպես իր հնամենի իրավունքի խորհուրդ, վերջինս մի քանի կոպեկ տալով աղջկա մոտ ազգական կանանցից մեկին՝ խնդրել է կապել գոտին<sup>36</sup>:

Հարս ու փեսայի՝ «թագուհու» և «թագավորի» զգեստավորման մեջ դիտվել է հետևյալ օրինաչափությունը. ապագա ամուսիններին զգեստավորում էին հատուկ ծիսակարգով հասակային ավագ խմբի որոշակի ներկայացուցիչների հետ՝ քավորը գլխավորում է փեսայի սափրելու, լողացնելու, հանդերձավորելու արարողությունները. մյուս կողմից՝ քավորկնոջից հետո նա է ավարտում հարսի գլխի հարդարանքը կապելու արարողությունը: Քավորը կատարում է մոզական գործողություն. հարսի մեջքին կապում է գոտի՝ նպատակ ունենալով ապահովել նրա որդեծնության կարողությունը<sup>37</sup>:

Հարսին հանդերձավորել են քավորկինը, ապագա տալը, եղբոր կինը, որոնց տարիքային խմբի մեջ են անցնելու նորահարսը և վերջինիս հավանական փոխարինողները (երիտասարդ աղջիկները): Փաստորեն, հարս ու փեսային ավանդաբար զգեստավորել են որոշակի տարիքային խմբի ներկայացուցիչներ, դրանով ընդգծելով ամուսնական զգեստի սըրբազան հանդերձավորման ծիսական նշանակությունը՝ հասարակության մեջ նոր դիրքին պատշաճ տարիքային կերպավորումով:

Մի ուրիշ օրինաչափություն՝ հարսի և փեսայի զգեստների, գլխի հարդարանքի, ազանդիքի տարրերը, իրենց սեռի տարիքային մյուս խմբերի համեմատությամբ առանձնացել են համալիրի ամբողջականությանը, ճոխությանը, և դա առանձնապես վերաբերում է հարսի հագուստին: Թվում է, թե հարսն ինքը և նրա ծիսական հագուստը ասես մի ամբողջական կենաց ծառի ինքնատիպ դրսևորում լինեն: Հարսանեկան զգեստն, ասես, մի նշանային համակարգ է՝ կապված հինավուրց հմայական արարողությունների հետ: Կարծում ենք, որ ժողովրդական տաղերում և միջնադարյան հայրեններում պատահական չէ բոլորովին, որ հարսնացուն «հաճախ ներկայացվում է «կանաչ-կարմիր» զգեստով»: Այսպես.

— Այ կարմիր կապավոր աղջիկ  
Կանաչ կարմիր հագնիս  
Զինչ նրան հատըն նմանիս:

կամ՝

Մտիկ իմ եարին արեք  
Զինչ հագեր՝ ամենն է կանանչ.  
Հագեր գույնզգույն կապող  
Կոճակն ու օղակն է կանանչ<sup>38</sup>:

Ինչ վերաբերում է գույներին, ապա ասենք, որ կանաչ-կարմիր գույները մի կողմից երիտասարդության, ուժերի ծաղկման, զորության խորհրդանիշ են, մյուս կողմից ունեցել են որոշակի ծիսական, պահպանական խորհուրդ ու իմաստ, և դրանց կիրառությունը հարսանեկան հագուստում բնավ երբեք պատահական բնույթ չի կրում: Կարմիր գույնը շատ

<sup>35</sup> Ց թիվը համարվել է քախտ բերող, դրա համար հարս ու փեսան պարի ժամանակ կատարել են պարտադիր երեք պտույտ, իսկ հարսի պարում գույզերի թիվը պետք է լիներ յոթ, որովհետև այդ թիվը Հայաստանում քարի կախարդության թիվ խորհրդանիշ էր: Փ. Խաչատրյան, Ջավախքի ժողովրդական պարեր, ՀԱԲ, Բ. 7, Եր., 1975, էջ 48: Բացի այդ զոհաբերություններ կատարելիս պարտադիր 3 անգամ պտտվում էին պաշտամունքային օբյեկտի շուրջը՝ իրենց հետ պտտեցնելով զոհաբերվող կենդանուն:

<sup>36</sup> Ա. Մխիթարյան, Եզվ. աշխ., էջ 247:

<sup>37</sup> Յ. Գ. Կարաբեյան. Об одном персонаже армянской свадьбы.—1965, № 2, с. 212.

<sup>38</sup> Մ. Աբեղյան, Գուսանական ժողովրդական տաղեր, հայրեններ և անտուններ, Եր., 1940, էջ 203, Նահապետ Քուչակ, Հարյուր ու մեկ հայրեն, Եր., 1976, էջ 59:

ժողովուրդների մոտ ունեցել է պահպանիչ նշանակություն, դա բացատրվել է նրանով, որ կարմիրը կրակն է խորհրդանշում<sup>39</sup>, իսկ վերջինիս մաքրագործող, սրբացնող գործությունը հայտնի է: Ամեն նոր, դալար բան ներկայացվում է կանաչ գույնով, ուստի այն երիտասարդության, ուժի, ծաղկման նշանալին ցուցիչ է:

Այսպես, ուրեմն նորահարսը կանաչ ծառ է, այս մոտիվը շատ հին է. կինը որպես կենաց ծառ, որպես կյանքը շարունակելու, զարգացման ու աճի ունակության կրողի հնամենի գաղափար դրսևորվել է կանացիակերպ քարակոփ կոթողներում, որտեղ կնոջ իրանը հարդարված է կենաց ծառի ոճավորված պատկերներով: Դա այն պատկերացման հրաշալի արտահայտությունն է, ըստ որի կինը և բնությունը կամ կյանքի նշանագիրը՝ կենաց ծառը, միանձնանում և միաձուլվում են, դառնալով կյանքի հավերժությունը, մշտնջենականությունն ապահովող գորավոր ուժեր:

Միջնադարյան ժողովրդական տաղերից պարզորոշ երևում է նորահարսի և ծառի, ծաղկի նույնության գաղափարը.

— Էրկնից գետնի գորութենով  
Էդ ծառն ծաղիկ էր  
Ծառ ծաղկեցաւ  
Ծուղ կայնեցաւ  
Կանաչ-կարմիր<sup>40</sup>:

Ա. Մնացականյանը, քերելով հնարույր հարսանեկան կենաց ծառի գույքի գողտրիկ մի նմուշ, գրում է, որ «հարսնացուն փառաբանվում է, ապա աննկատելի կերպով նույնացվում վարդի, նուան, կենաց ծառի հետ: Ծեշտը դրվում է վերջինի վրա, և հարսնացուի գաղափարը ձուլվել է կենաց ծառի հետ, իսկ դա էլ տան, ընտանիքի հետ<sup>41</sup>: Վիճակի երգերում աղջկա, նորահարսի գաղափարը հաճախ կապվում է կենաց ծառի, իսկ վերջինս էլ՝ տան, ընտանիքի, տոհմի հետ<sup>42</sup>:

Այն միտքը, որ հարսնացուի հարսանեկան զգեստը մի ամբողջական կենաց ծառի նշանալին համակարգ է, կարծում ենք, հաստատվում է այն բանով, որ դրա առանձին մասերում լուան կյանքի, բեղմնավորության, արգասավորության տարրեր իմաստակիր նշանագրեր (գոգնոցի վրա՝ նշագարդեր, կենաց ծառեր, ծաղկանախշեր, կրծկալի վրա՝ բուսանախշեր, վերնագգեստը եզերված է ծաղկանախշերի անվերջ շարանով. գլխի հարդարանքը, ազանելիքը ևս գեղազարդված են բուսանախշերի ոճավորված պատկերներով)<sup>43</sup>:

Որ կինը կենաց ծառի նշանագրով է ներկայացվել, հաստատվում է բացասման մի փաստով՝ ամուլ կինը, ժողովրդի մեջ, համարվել է չորացած ծառ, կոճղ:

Այսպիսով, հարսի ծիսական հագուստի մեջ ևս դրսևորվել է ամուսնական գույգի արգասավորությունը՝ վերջին հաշվով սերնդաճի հարատևությունն ապահովելու ձգտում, որն առավելապես արտահայտվել է հագուստի առանձին տարրերում, դրանց բնավ ոչ պատահական հատվածներում եղած անեղնագործ կամ այլ զարդանախշերում և զարդարանքներում, որոնք շարունակել են մնալ որպես չկարդացված իմաստային նշանագրեր: Ըստ Գագեն-Տորնի՝ թե՛ գույների ընտրությունը և թե՛ նախշագարդ կտորը պատահական բնույթ չունեն և գեղագիտական ճաշակի և նորաձևության քնայքներից չէ, որ դրանք կյանքի են կոչվել, այլ շատ հին ու կայուն ավանդույթների արգասիք են, որոնք երբևէ ունեցել են խորհրդանշական իմաստ<sup>44</sup>:

Հարսանյաց հանդեսի ժամանակ Ալեքսպոլում աշխատել են միշտ շրջապատել նորապակներին և թույլ չտալ, որ որևէ մեկն անցնի նրանց միջով կամ էլ տրորի հարսանեկան զգեստի քղանցքը, դրանից ծածուկ կտոր կտրի, որոնք, ըստ ժողովրդական պատ-

<sup>39</sup> Н. И. Гаген-Торн. Женская одежда народов Поволжья, с. 210. Э. Х. Петросян. Театральные черты в средневековых армянских миниатюрах.—ՀԱԲ, № 7, Ереван, 1975, с. 166.

<sup>40</sup> Ա. Մնացականյան, Հայկական զարդարվեստ, էջ 210:

<sup>41</sup> Ա. Մնացականյան, Հայկական զարդարվեստ, էջ 284:

<sup>42</sup> Նույն տեղում, էջ 285:

<sup>43</sup> Ա. Ստեփանյան, Ծառապատկերը հարձր Հայքի կանանց հյուսածո գոտիների զարդանախշերում: Ջեկ. թեզիս— Հանրապետական գիտական նստաշրջան, նվիրված 1984—85 թթ. ազգագրական և բանագիտական դաշտային հետզոտությունների հանրագումարին, Եր., ԳԱ հրատ., 1987, էջ 90—91:

<sup>44</sup> Н. И. Гаген-Торн. Женская одежда народов Поволжья, с. 206.

կերացումների, գույգին կերերն միայն չարիք ու քաժանուց: Այրի տղամարդկանց և կանրանց խստով արգելվել է մասնակցել որոշ արարողությունների և ցույցնակ ձեռք տալ անրապատկանների հագուստին: Ապատակը մեկն է՝ գույգին գեքն պահել այրիության մեծ չարիքից, վնասաբեր մոգությունից: Հարս ու փեսայի պարանոցին պատկադրության արարողության ժամանակ կապել են կարմիր-կանաչ-սպիտակ ոլորուն բրդյա թելից նարոտ: Չափազանց ուշագրավ են գունային այս գուգորդումները և ոչ պատահական<sup>45</sup>: Հացուցին այս առիթով գրել է. «Նարոտն ալ, կարմիր ու սպիտակ գույներով հյուսածո, միջին դարուն կը կապվի պատկելով գլխին»: Այն ունեցել է գույգի սերնդաշարունակման ունակությունները կապահովելու, շրջապատի «չար ուժերի» վնասաբեր ազդեցությունից հեռու պահելու խորհուրդը<sup>46</sup>: Նարոտը կարմիր և սպիտակ գույների համադրությամբ օգտագործվել է և բուժական նպատակներով<sup>47</sup>:

Համաձայն ազգագրական նյութերի՝ անցյալում հարս ու փեսային տանից դուրս քերելիս փեսան բռնել է թաշկինակի մի ծայրից, հարսը՝ մյուս: Կարծում ենք, որ այս սովորույթը հին արմատներ ունի և պատահական չէ, հարսանեկան զգեստների դիտարկումից պարզվում է, որ կամ դրանց թևերն են քավական երկար լինում, կամ էլ ինչպես Կարինում, Ալեքսանդրապոլում, Ախալքալաքում, Ախալցխայում, ունենում են հարուստ ասեղնագործություններով, թևաբերաններին կցվող զարդահավելվածներ, որոնցով իսկ կանխվում է նորասպանների՝ միմյանց ձեռքերը անմիջապես բռնելու հնարավորությունը, որն իբրև դժբախտության, չարիքի աղբյուր է: Կարծում ենք, որ եվրոպական տիպի հարսանեկան հանդերձանի մեջ նույն դերը կատարում էին երկարաճիտք ձեռնոցները: Փաստորեն, այստեղ մենք տեսնում ենք, թե ինչպես մի կողմից՝ ժողովրդական պատկերասրահներն իրենց կնիքը դնում են զգեստի վրա, մյուս կողմից՝ օտարածին տարրի առկայության դեպքում՝ ժողովրդական սովորույթը պահում է իր կենսունակությունը: Նշենք, որ ընդունված էր հարսանեկան զգեստները փոխ տալու և հարսանիքից հետո հետ վերադարձնելու սովորույթը:

Անցյալ դարի վերջերին դիտարկվող մարզի քաղաքներում՝ Ալեքապոլում, Ախալցխայում և Ախալքալաքում, հարուստ խավերի եվրոպական մշակույթի հետ ունեցած սերտ առնչակցության ու շփումների, եվրոպական նորաձևությունների տարածմամբ փոփոխություններ էին կատարվում նաև մարդկանց հանդերձանքում, որոնք իրենց արտահայտությունը գտան նախ քաղաքաբնակ հարուստների հարսանեկան հանդերձանքում:

Հարուստ տղամարդի՝ առևտրականներ, միջնորդ կապալառուներ, կապվածատերեր, գործարանատերեր և եվրոպական կրթություն ստացած մտավորականներ, սկսել էին զգեստավորվել եվրոպական հագուստով՝ սպիտակ վերնաշապիկ, բաճկոն և տաբատ, ֆրակ, թանկարժեք կտորներից վերարկու, գլխներին կրելով լայնեզր գլխարկներ:

Ըստ դաշտային ազգագրական նյութերի՝ 19-րդ դ. վերջին քաղաքների հարուստ խավերի շրջանում փեսացուն հագել է սպիտակ վերնաշապիկ, եվրոպական կոստյում՝ գրգռում ենք մտնակ մոմե ծաղիկներով: Ազգագրական նյութերը հաստատվում են 19-րդ դ. վերջին և 20-րդ դ. սկզբին արված լուսանկարները, որոնք պահվում են ՀԳՊ-ի և ՀԱՍ-ի ֆոտոֆոնդերում: Ունեոր խավի ներկայացուցիչները հարսանիքներին ներկայացել են սպիտակ վերնաշապիկով, երբեմն նաև ֆրակով, պարանոցի հատվածում ամրացվող ծապավենազարդով, սև փողկապով, եվրոպական գլխարկով և ոտնամանով, ոմանք ձեռներին ձեռնափայտ բռնած:

Դիտարկվող թեմայի համար կարևոր է անգլիացի ճանապարհորդ Լինչի ալեքսանդրապոլցիների հարսանյաց հանդեսի հակիրճ, քայքայ արժեքավոր նկարագրությունը և հատկապես նրա «Հարսանյաց հանդեսը Ալեքսանդրապոլում» լուսանկարը, որտեղ պարզ երևում են սեռա-տարիքային խմբերը ներկայացնող հարսանքավորների հագուստների միջև եղած տարբերությունները, որոնք արտահայտում են ավանդությանից և եվրոպականի մի ինքնատիպ գուգորդություն:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ 19-րդ դ. վերջին և 20-րդ դ. սկզբին լուրջ փոփոխություններ են կատարվել նաև հարուստ քաղքենուհիների տարազում: Հարուստները իրենց հարսանցունների համար հատուկ եվրոպական զգեստներ կարող դերձակների (պարսնոյ) մոտ պատվիրել են թանկարժեք «բենգալին, կրեպոն, կրեպաստին, մար-

<sup>45</sup> Վ. Հացուցի, Պատմություն հին հայ տարազին, էջ 299:

<sup>46</sup> Ըստ Ջ. Խառատյանի՝ ճարտուն ինքը նվիրագործվողի ճանապարհի խորհրդանիշ է (նկատի են առնվում հարսն ու փեսան), իսկ դրա կանաչ-կարմիր անվանումը կարող է դիտվել իբրև ամուսնական գույզում աղջիկ-տղա, հարս ու փեսա գունային ճշմանկում.— Ջ. Վ. Խառատյան, Ամուսնական գույգի ուղին հայոց հարսանիքում, Լրաբեր հաս. գիտ., 1989, էջ 21:

<sup>47</sup> А. А. Одабашян, Народные верования армян (по материалам рукописных та- левсманов 15—19 вв.).—КЭС, т. 6, М., 1976, с. 118.



կիզել» և այլ մետաքսա և բամբակյա ճերմակ կտորներից երկարատուտ՝ այսպես կոչված «շլեյֆով» ամբողջական վերնագգեստներ կամ երկմաս զգեստներ, որոնք հարդարվել են ասեղնագործ ու ժանեկագործ հավելվածներով: Հարսին հագցրել են մինչև արմուկները հասնող սպիտակաթույր մուրր ձեռնոցներ, սպիտակ գույնի կոշիկներ կամ կիսաերկար ճտքերով, կոճկազարդ ոսնամաններ: Գլուխը ծածկել են գործարանային ժանեկազարդ մետաքսա շղարշով՝ «ֆատայով», որը հանել են հարսանիքից անմիջապես հետո:

Սոցիալական բարձր խավերում հարսին նվիրել են աղամանդե, զմրուխտե քարերով, մեծ շրջանակներով մատանիներ, ոսկյա ապարանջաններ, կափարիշով ժամացույց, գոհաբազարդ կրծքազարդեր և այլն:

Աստիճանաբար, հարսանեկան զգեստների վերոհիշյալ տարբերակները տարածվում են նաև հասարակության մյուս խավերում, անշուշտ, ավելի պարզեցված ձևով:

Անցյալ դարի վերջերին և ներկա դարի սկզբներին դիտարկվող մարզի քաղաքային կենցաղում տարածված հարսանեկան հանդերձների պատմաազգագրական դիտարկումը հնարավորություն է տալիս տարբերակել տարազի քաղաքային տոնական ինքնատիպ հասարակություն:

Ալեքսանդրապոլ, Ախալցխա և Ախալքալաք քաղաքներում կիրառված հարսանեկան հագուստի ուսումնասիրությունից պարզվում է, որ ժողովրդական տարազի համակարգում նորամուծությունների կրողների և ապա տարածողների դերում հանդես են եկել ունևոր խավի՝ «վերնախավի» ներկայացուցիչները, որոնք տնտեսական ու մշակութային սերտ կապերի շնորհիվ արագորեն փոխառել և յուրացրել են եվրոպական հագուստն ու կիրառել այն, աստիճանաբար նպաստել դրա տարածմանը ժողովրդական լայն խավերի մեջ:

**С. А. ПОГОСЯН—Свадебный наряд в Джавахском и Ширакском районах.—** Свадебная одежда как составная часть ритуального костюма—особая знаковая система с социальными и возрастными различиями. Согласно этнографического материала, в середине 19-го века в Ширакском и Джавахском районах свадебный традиционный костюм характеризовался несколькими закономерностями: свадебная одежда не отличалась от обыденной по покрою, но отличалась фактурой и цветом ткани, техникой орнаментации, способами украшения. Костюмы невесты и жениха, по сравнению с другими возрастными группами своего пола, выделялись своей компоновкой и красочностью. Ритуальное одевание новобрачных исполняли определенные представители старших возрастных групп. Некоторые части традиционного свадебного наряда употреблялись только во время или сразу после свадьбы. Свадебный комплекс кроме практической, церемониальной, эстетической функции, имел и апотропейное назначение. С конца 19-го в. в одежде зажиточных слоев заучаемого региона стали заметны существенные изменения под воздействием европейской культуры. В ремесленных кругах сохранялся традиционный костюм, городской же вариант стал несколько отличаться от сельского